Հարս, հան վիճակն ի բարի

Վիճկիս անուն յաման ի,
Ջա՛ն, վիճակ, ջա՛ն, ջա՛ն,
Չեմ տա հազար թումանի,
Ջա՛ն, գյուլում, ջա՛ն, ջա՛ն:

Կիտամ մե բազըրգյանի,
Դընա ղութիկն ու տանի:

Վիճակ նստե վըր իշուն,
Վիճկի փեշերն ի նըխշուն:

Ազաբ լաճեր ըդրա շուն,
Պսակ կուզեր էս աշուն:

Տանուտեր էրթար բազար,
Ոչխըրներն էնա հազար:

Տան տըկին մըր փայը տուր,
Տանըդ չըլնի գիլ – գազան:

Հարս, հան վիճակն ի բարի,
Վիճակն ի բարի,
Հարս, հան վիճակն ի բարի,
Վիճակն ի բարի:

Մերդ կերավ խավըրծիլ,
Քեզի բերավ օսկեծիլ:
Մերդ կերավ թթու թան,
Քեզի բերավ ճըտվըտան:

Հարս, հան վիճակն ի բարի,
Վիճակն ի բարի,

Հարս, հան վիճակն ի բարի,
Վիճակն ի բարի:

Մերդ կերավ եղեղեն,
Քեզի բերավ հրեղեն:
Մերդ կերավ ծնեբակ,
Քեզի բերավ չաչանակ:

Հարս, հան վիճակն ի բարի,
Վիճակն ի բարի,
Հարս, հան վիճակն ի բարի,
Վիճակն ի բարի:

Մերդ կերավ մռու սոխ,
Քեզի բերավ խաղ ասող:
Էրնեկ քըզի բախտավոր,
Քո յար կըլնի թագավոր:

Հարս, հան վիճակն ի բարի,
Վիճակն ի բարի,
Հարս, հան վիճակն ի բարի,
Վիճակն ի բարի: